ԱՄԵՆԱՅՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԻ
Պարբերական ուղղուիլ առ—
խմբագիր և Տնօրէն
«ՀԱՅՔ»ի
ՏՈՔ. Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ.

Ձեռագիրք Չեն Վերադարձուիր
—Բաժանորդագրութիւնք—
Ամէն երկրաց համար
ԵՐԿՈՒ ՏՕԼԱՐ ԿԱՆԽԻԿ

ՀԱՅՔ

HAIK
ARMENIAN POLITICAL AND HYGIENIC FORTNIGHTLY.—
EDITED BY
M. S. GABRIEL, M. D.
202 W. 23d Street, New York, U. S. A
To whom all communications must be addressed.
Terms for all Countries.
One Year - - - - $ 2.00.

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Editor—M. S. GABRIEL, M D. ՏԷՐ-ԽՄԲԱԳԻՐ—Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ
202 W. 23rd St., New York City, U. S. America.

Ա. ՏԱՐԻ | ՆԻՒ ԵՕՐՔ | ՅՈՒՆԻՍ 15 1891 | ԹԻՒ 12

Entered as second-class mail matter, at P. O. New York.

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ Թագաւորի մի Զէտագիր Սուրագրութիւն—Պարիզ—Մարդիկ և Կեղծ Ընդարձակ—Հայերէն Էջեր—Արեւելեան Լեզու—Ընդհանուր Հայկական Ուրախութեան—Նամակ Կ. Պոլսէն—Նամակ Տրէզոնէն—Նամակ Թիֆլիսէն—Նամակ Փարիզէն—Նամակ Արփանց Եփրատայ—Օրագրոներ—Այլ և այլ։

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«ՀԱՅՔ»ի առաջին վեցամսեայ շրջանն նեւրկայ թուով լրացած լինելով կը հնդ սեմք մեր վեցամսեայ բաժանորդներէն փոխով վճարել տարեւոյն մնացեալ կէսին համար։

Այս առթիւ կը մատուցանեմք մեր ջերմ շնորհակալիք այն ամէն ազնիւ համակրողաց որք իրենց հայրենասէր հոգածութեան առարկայ ըրին «Հայք»ն։ Ուրախ եմք տեսնել բոլոր Հայ Գաղթականութեանց մէջ թերթիս յարաճուն կարեւորութիւնն և շրջաբերութիւն, և կը խնդրեմք որ հոգածուք շարունակեն իրենց խրնամք, մեր կողմանէ խոստանալով անձանձիր և խղճամիտ աշխատութիւն։

ՀԱՅ ԹԱԳԱՒՈՐԻ ՄԻ



ՁԵՌԱԳԻՐ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Արտասպեալ Գեր. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ

ՍԿԱՍՈՒԱԾԵՔ

Մարդուն ստորագրութիւնն իւր կենդանագիրն է ինչ ինչ նկատմամբ և առաւել իսկ է քան իւր կենդանագիրն նկատմամբ իւիք։ Նշանաւոր մարդիկներու, մեծ բանաստեղծներու ձեռագիր ստորագրութիւնն մեծագնակ սակով կը գնուի երբեմն։ Ռուբինեան Հայ Թագաւորի մի ստորագրութիւնն տեսնել խորին հաճոյք մ'եղած է մեզ, և տարակոյս չունիմք թէ նոյնքան հաճելի և սիրելի պիտի լինի «Հայք»ի ընթերցողաց։ Գեր. Հայր Ալիշանի Սիսուանէն կ'արտասպեմք վերի ստորագրութիւնն, որոյ բնագիրն կարմիր մելանով է մինչ մերս՝ սեւ։

Մարգարէին ձեռագիր նամակն զոր Սուլթան Մէճիտ 500,000 դահեկանի գնած էր 1858ին, և որ այժմ կայսերական դանձուն սիրելագոյն առարկաներէն է, ըստ հեւազօսութեանց Փրոֆ. Գարապասէքի, շինծու է, և Մարգարէին մահուանէն գոնէ երկու հարիւր տարի յետոյ գրուած է։

ՊԱՏԵՐԱԶՄ

Պատերազմն աշխարհի քաղաքակրթութիւնն յառաջ տանող, անհատներու բնաւորութիւնն զարգացուցող և իմացականութիւնն զարգացուցող հարկաւոր գործի մ'եղած է։

Ազգաց և ժողովրդոց մեծագոյն զբաղումն եղած է պատերազմի պատրաստուիլ և պատերազմիլ. մարդկային սեռին պատմութեան մեծագոյն մասն պատերազմաց պատմութիւն է։

Այսօր որպէս հազար կամ հինգ հազար տարի առաջ՝ քաղաքակիրթ աշխարհն պատերազմի պատրաստութեամբք կը զբաղի, իւրաքանչիւր ազգի ելմտացուցին մէջ ահագին տեղ կը բռնէ պատերազմական նախարարութեան ծախքն, գործարաններ չեն դադարիր հրացան, թնդանոթ վառօդ և սուր չինելէ, ուղեղներ անդուլ կ'աշխատին սպառազինութեանց տալ կատարելութիւն, և արդարեւ կը յօրինեն անծուխ վառոդ, աւելի թեթև և աւելի հեռուն արձակող բազմհարուածեան հրացան, աւելի սարսափելի թնդանոթ, աւելի դիմացկուն զրահ և պատնէշ։ Ամէն մեծ ազգի մեծ խնդիրն է այսօր թէ ինչպէս կրնան պատրաստուիլ որ տուեալ վայրկենի մի մէջ կարենան մեծագոյն կարելի եղած թուով մահեր և աւերումներ պատճառել։

Բարբարոս դարերէ մնացեալ շատ բաներ անհետացած են, գերութիւնն վերցած է, աւատապետութիւնն ջնջուած է, բացարձակ միապետութիւնն գրեթէ չէ մընացած, բայց պատերազմն կը մնայ, պատերազմն կը մեծնայ։

Խաղաղութեան բարեկամք և բարոյախօսք ինչ ալ որ ըսեն, մրցանք վասն գոյութեան ըսուած օրէնքն է որ կը ծնուցանէ պատերազմն, և, թէև սարսափելի բայց հարկաւոր և օգտակար է պատերազմն։

Մեր դարուն մէջ մարդիկ հաճոյք և հեշտութիւն շատ կը սիրեն, հանգստութիւն վայելելու, որքան որ հընար է բարօրիկ կենցաղ վարելու մեծ ճաշակ ունին ժողովուրդք, անոր համար է որ պատերազմի դէմ ունայն բացագանչութիւնք աւելի կը լսուին։ Բայց այս բացագանչութիւնք չեն զօրեր բնութեան օրէնքն խափանելու, և այն Եւրոպա որ զարդարուած է հիւանդանոցներով, դպրոցներով, եկեղեցիներով, որբանոցներով են, կը պատրաստուի այն մեծ պատերազմին որոյ առջեւ անցելոյն մեծագոյն պատերազմունք տղայական կռիւներ պիտի երեւին։

Քանի որ քաղաքակիրթ աշխարհ զօրութեան միջոցաւ իր իրաւունքներն պաշտպանելու հարկին ներքեւ կը գտնուի, մեզ Հայոց ներելի՞ է յուսալ թէ լոկ թերթերով և փաստաբանութեամբ կրնամք ստանալ մեր պահանջներ։ Ընթերցողք առ հասարակ պիտի պատասխանեն «ո՛չ։»

Ուրեմն Հայերս ալ քաղաքակիրթ աշխարհի ընթացքին և բնութեան օրինաց հետեւելով՝ պարտիմք պատրաստուիլ մեր զինու զօրութիւն միացուցեալ բանին զօրութեան։ Այսմ եւս «այո՛» կ'ըսէ ամեն ոք։

Բայց երբ գործնական միջոց երու և իրական պատրաստութեան գանք կը գտնենք ոչ ինչ։

«Հայք»ի քաղաքականութիւնն է «ԵՐԿՍԱՑՐԻ ՍՐՈՑ» քաղաքականութիւնն։ «Հայք»ի հաւատքն է թէ Հայերն անմիջական մեծ կարօտութիւն ունին զինուորական կրթութեան։ Թէ Հայ Ազգն ինչ ուժեր ունի և ինչպէս կը պարտի գործածել զայնս, թէ որքան և որպիսի զինուոր կրնայ հանել, և ատանք ինչպէս կրնան պատրաստուիլ, պիտի քննեմք յառաջիկայ թուով։

ՄԱՏՆԻՀԱՐ
ԵՒ
ԿԵՂԾ ԱԶԳԱՍԷՐԲ

Յեղափոխական ժամանակաց յատուկ եղող անկարգութիւններ սկսած են գործուիլ մեր ազգին մէջ։ Տաճկաստան անդամալուծիչ երկիւղ մի կը տիրէ Հայոց վերայ առ հասարակ. յեղափոխականն և ազատականն կը վախնան հարկաւ. բայց հանդարտն և մինչեւ անդամ անտարբերն ալ կը վախնայ. և գիտէ՞ք որմէ։— մատնիչ Հայերէ։ Խարբերդի կողմն անցեալներ մի քանի Հայեր անձնական վրէժ լուծելու յանմեղ ազգայնոց ոմանց, դրպարտելով զայնս իբր թէ կառավարութեան շահուց հակառակ խօսքեր արտասանած էին. բանտարկուեցան դրպարտեալք և մնացին ի բանտի երկու ամիս՝ հակառակ իրենց բարեկամաց ջանից և բացատրութեանց կառավարութեան քով։ Ուրիշ մի քանի վատ Հայեր սպառնացած են դրպարտել թէ Խարբերդի Եփրատ Գոլէճին մէջ արգիլեալ դասախօսութիւններ կը լինին։ Փոքուն Ասիոյ քաղաքաց միոյն, զոր չեմք ուզեր անուանել ատ, պատուաւոր Հայ վաճառականներէն ոմանք դրպարտուեցան իբր թէ օտար երկրաց հետ հակամանեան թղթակցութիւններ կը կատարէին. իրենց բոլոր թղթերն և արկղներն քննուեցան և ոչ սակաւ ձանձրոյթ և ծախք ունեցան տարապարտուց։

Մատնիչներ չեն վերաբերիր միայն անուս և աշխարհական դասուց այլ և վարժապետաց և կղերականաց մէջ ևս կը գտնուին, որոց ծանօթ օրինակք ամենուն յիշողութեան մէջ թարմ են։ Ամէն կարգէ Հայ լրտեսներու թիւն ահագին է ի Կ. Պոլիս և ի գաւառս։

Արտասահմանի Հայ Գաղթականութեանց մէջ թուշակաւոր լրտեսք հազուագիւտ են, բայց ոչ վասն զի զայդ պաշտօն վարելու ամենայն յօժարութիւն ունեցողներ կը պակսին այլ վասն զի ասպարէզ չկայ։

Հայրենասիրական զգացմանց բորբոքեալ վիճակէն օգուտ քաղելու աշխատող կեղծ ազգասէրներն լրտեսներու քով պէտք է դասուին։ Նոյն իսկ Կ. Պոլսոյ մէջ գտնուած են գործիչի անունով դրամ հաւաքող և իրենց գրպանն լեցուցողներ։ Այսպիսիք աւելի վնասակար են քան զլրտեսներն անդամ։

Զարմանք չէ ուրեմն որ արտասահմանի մէջ եւս նոյն կարգի խաբեբաներ գտնուին և պարագայից յարմար կերպիւ իրենց քսակին և սնափառութեան միանգամայն սնունդ մուրան։ Ամերիկայի Հայ Գաղթականութիւնն ասկէ առաջ գիտցած է այսպիսեաց խղճալի յաւակնոտութիւնն հրապարակաւ խայտառակել։ յուսալի է թէ ամենայն գաղթականութիւնք եւս պիտի չթերանան աշալուրջ ընտրողութենէ։

Առ Տիար Պ..., ի Փաթէրսըն, Նիւ Ճէրսի

Ձեր արդար բողոքոյ նամակն ընդունեցինք, բայց պիտի չկրնամք հրատարակել, վասն զի չենք կրնար զիջանիլ չորցած տերեւի մի դէմ ահաւորլինելու։ Ամէն ոք կը ճանաչէ արդէն զայն զոր հարուածել կ'ուզէք. և «Հայք» չկրնար անոր վայրահաչութեանց պատասխանել մինչ այնքան կարեւոր գրուածներ թիւէ թիւ կը յետաձգուին տեղւոյ անձկութեան պատճառաւ։

ՀԱՅԵՐԷՆՆ ԻՐՐԵՒ ԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ ԼԵԶՈՒ

Տե՛ս նախորդ թիւն

Զ

Կենդանեաց անուններ ունիմք որք յայտնապէս նըմանողութիւն են կենդանեաց ձայներուն. օրինակի համար ճնճուղ, ագռաւ և բզէզ անուններն։ Բաւական պիտի լինի իմացունել հայերէն չգիտցողի մի թէ ասոնք կենդանեաց անուններ են, դուշակել տալու համար մերձաւորապէս թէ որ տեսակաց վերաբերեալ են։ Օրինակի համար չպիտի կրնայ օտարականն կարծել թէ հայերէն ագռաւն մժղուկ կամ բու ըսել լինի։ Ուղտ, ձի, կով, ժիժի ձայներու նմանողութիւն են։ Նոյն ինքն թռչուն կամ թռչիլ այս կարգին կը վերաբերի, թռչունք իրենց թեւոց սաւառնական շարժմամբ ձայն մի կը հանեն, որում ըստ կարելւոյն մերձաւոր նմանութիւնն է թռ ձայնն։

Կենդանեաց անուններուն այս ձայնական հանդամանքն չէ թէ արտաքին միայն այլ և ներքին բնականութիւն մ'ունի։ Բացատրեմք զայս։ Ինչպէս՝ է կենդանեաց տեսակարար բնաւորութիւնն, այսպէս են նոցա մարմին և ձայն. և վերոյիշեալ հայերէն բառերն առաւել քան նիւթական լաւութիւն մ'ունին։ Գառնուկն չկրնար մռնչել, և ոչ առիւծն կը ըզէ։ Ճնճղուկն որ փոքր է, չկրնար ձայնական այն գործիներ ունենալ որով ագռաւն «կառ կառ» կ'ընէ։ Մժղուկն, ընչին միջատ, չկրնար այն թեւերն ունենալ որով թռչունք թռռ ձայնն զօրաւոր կը հանեն իրենց թռիչներու սաւառնական շարժմամբ։ Արդ երբ մարդ իղնին կայ կենդանւոյ մի, նորա մեծութենէն, երեւութէն, շարժումներէն և ձայնէն կ'ընդունի տպաւորութիւն մի որոյ համեմատ իւր ձայնական գործիներ անուն մ'արտասանելու կը շարժին. և որովհետեւ ձայնն զոր կենդանին կը հանէ թէ ձայնական գործարանք թէ մարմնոյն և անդամոց շարժմամբն՝ կը համապատասխանէ իւր մարմնական կազմութեան և ներքին բնութեան, մարդն ալ բնազդմամբ կը միտի կենդանւոյն ձայնիւն զնա անուանել, ձայնիւ, որոյ նմանն, սկզբամբ, ինքն արդէն յօրինելու կամ արտադրելու վերայ էր։ Ասկէ կը հետեւցունեմք թէ «ուղտ», «ձի», «ագռաւ», «ճնճուղ», «մժեղ», «իժ», «կով», «բու», «կռունկ», «ծիծեռն», «խոզ» և նման հայերէն բառեր կրկին իմաստիւ բնական են, նախ՝ իբրեւ նմանութիւն կենդանեաց ձայնին, երկրորդ և մանաւանդ՝ իբրեւ ձայնական պատկերներ նոցա բարոյական և մարմնական հանդամանաց։

Ոչ միայն կենդանիք այլ և անկենդան իրեր տպաւորութիւն կը գործեն մեր խորհրդոց և զգացմանց վերայ, և այդ տպաւորութեան ներքեւ և այդ տպաւորութեան համաձայն ձայնիւ՝ իրերն անուանեալ և որակեալ են։ Երբ մարդ ունկն դնէ կաթիլ կաթիլ կաթող ջրոյ, կը լսէ ձայն մի որ համեմատական է զայն յառաջ բերող կաթիլ մի ջրոյ քանակին. ուստի և լսուած ձայնին հետեւելով կամ նմանելով կը բացատրէ իւր տպաւորութիւն շիթ, պուտ, կաթիլ, ըսելով։ Բայց եթէ մեծ մարմին մ'ինայ ջրոյ մեծ քանակութեան մէջ, ի հարկէ շատ աւելի մեծ ձայն յառաջ կուգայ քան զկաթիլին, այն է ճղփիւն։ Օդոյ հոսանքն ալ տեղի կուտայ ձայնի, որ հողմ է, և եթէ շատ արագ է հոսանքն, մրրիկ է։ Արդ բաւական է հողմ և մրրիկ բառերն ազդուապէս և երկարօրէն առոգանել զգալու համար այն համաձայնութիւն որ կայ այդ հոսանաց ձայնին, անուններուն և անոնցմէ յառաջ եկած տպաւորութեան միջեւ։

Ը

Բառերուն կազմին և նոցա նշանակութեան միջեւ, գոնէ Հայերենի մէջ, ուրիշ և աւելի սերտ առնչութիւն մի դիտած եմք, որ կարի հետաքրքրական է և հզօրապէս կը հաստատէ մեր տեսութիւն։ Կամիմք խօսիլ հոգերանական և բնախօսական բառերու զարմանալի բնականութեան վերայ։ Գիտեմք թէ տխուր, սեւամաղձոտ զգացման ներքեւ մարդ կը հառաչէ, այսինքն չունչ կ'առնու՝ հաղագէն ձայն հանելով, և այդ ձայն այն իսկ է զոր կը դտնեմք եթէ հառաչել բառին Հ արմատն հնչեմք չունչ առնլով հանդերձ։ Ուրեմն հառաչել բառն կազմուած է ընդ ազդեցութեամբ այն հոգերանական վիճակին զոր բացատրելու պաշտօն ունի այդ բառ։

Ա Հ բառն եւս, որ սաստիկ և յանկարծական երկիւղ կը նշանակէ, նոյնպէս կուտայ այն ձայն զոր մարդ ահաւոր կամ ահագին առարկայի մի ներքեւ կ'արտաբերէ, զարձեալ հաղագէն, և Հ տառն է տիրող ձայնն, միայն թէ հաղագն և բերանն աւելի բաց են և Հ ձայնն շատ աւելի արագ, կարճ և զօրաւոր է քան զՀ հառաչելոյ։ Խնդալ բառն եւս բնախօսական և հոգերանական է. զգացման այն տեսակն որ խնդում կը պատճառէ ոչ միայն երեսին վերայ այլ և միանդամայն բերնին և քիմքին մէջ յատուկ փոփոխութիւն մի յառաջ կը բերէ, և եթէ խնդալ բառին ձայնական հանդամանքն դիտեմք, պիտի որոշակի տեսնեմք թէ բառն ճիշդ խնդալու հոգերանական ձայնն իսկ է։ Ծիծաղ բառն ալ նոյնպէս է, սա տարբերութեամբ որ՝ մինչ խնդալն աւելի լեցուն ձայնիւ և բերնին խորէն է, ծիծաղն ակռաներուն մէջ տեղէն է և նուազ բարձրաձայն, հետեւապէս և իւր նշանակութիւն ալ չկրնար բոլորովին նոյնն լինիլ խնդալ բառին հետ։

Ահաւանիկ բառեր որք հոգերանական վիճակներ բնախօսօրէն կը պատկերացունեն աքանչելապէս։ Եւ ահաւասիկ կարգ մի բառեր որք բնախօսական գործողութիւններ կը նշանակեն, կը պատկերացունեն. լեզուլ, լափել, լակել, փչել, փքնել, թքնել, պագանել, ծծել, փուք, ծամել, կլանել, խեղդել, հեղձնուլ, խողխողել, հեւալ, հազալ հեծեծել, հեկկալ, խորդալ, փռնչել, փռնդալ, շնչել, հնչել։ Այս բառերն լաւ արտասանելով ոչ թէ միայն կը նշանակեմք այլ կը կատարեմք գործողութիւններն։

Հայերէն լեզուն ճարտար առոգանութեան դերազանց յարմարութիւն մ'ունի իւր այն բառերու շնորհիւ եւս որք վիճակի մի ծայրայեղ սաստկութիւնն կամ գործողութեան մի կրկին և կրկին կամ շարունակ կատարումն կը նշանակեն։ Առաջին կարգին օրինակ են բառքս՝ մեծամեծ, բարձրաբերձ, խորխորին, խորխորատ, խորտուբորտ, պատիպատ, տարտամ, խառնիխուռն, հաստամեստ, սարսուռ, յարմար, կպռկտռ, կսկիծ (կծ-

կիծ) խարխուլ։ Երկրորդ կարգին օրինակ են այն բաներ, որք, փոխանակ երկիցս կամ աւելի անգամներ կրկնուելու որպէս զի գործողութիւնն ճշդիւ նկարագրեալ լինի, արմատին միայն կրկնութեամբ յերիւրեալ են. զոր օրինակ, փոխանակ ըսելու քակել, քակել մինչեւ որ ողջոյն ջէնքն քակուի, կ'ըսէ քայքայել. փոխանակ ըսելու թաղել կրկին և կրկին, կ'ըսէ թաթաղել. փոխանակ ըսելու տանիլ, տանիլ յայսկոյս և յայնկոյս, կը ըսէ տատանիլ։ Կցել կ'ըսուի երկու կտորի կամ երկու առարկայի մասին, բայց եթէ առաւել քան երկու, բազում կտորներու մասին է խօսքն, կ'ըսուի կցկցել։ Մէկ կաթիլն կը կաթէ, բայց եթէ բազում կաթիլներ իրարու կը յաջորդեն կը կաթկըթէ։ Այսպիսի կրկնական կամ շարունակական միտք տուող բառեր շատ են մեր լեզուի մէջ, ինչպէս ջախջախել, բարախել, կայկայել, ոստոստել, դողդողալ, թռթռալ, վազվազել, դանդաչել, կակազել, թոթովել, յեղյեղել, մռմռալ, կերկերիլ, շողշողալ, փողփողել, ծածանիլ, խորխոլիլ, պտպտալ, փայփայել շօշափել (շաւշափել,) թոթափել, (թաւթափել, թափթափել) քճքճել, քրքրել, դրդռել, թաթաւել։ Այս բառերու արտասանութեան մէջ արմատն ողջոյն կամ սակաւ ինչ եղանակաւորեալ՝ կրկնուած է, որով նշանակեալ գործողութեան մէջ եղած կրկնութեան կամ շարունակութեան դաղափարն պատկերացած է։

Թէեւ իվերոյ բնականութեան զանազան տեսակներ և այլ և այլ օրինակներ ցուցինք, կ'արժէ որ դիտել տանք մի քանի կարեւոր կէտեր եւս յառաւելագոյն պարզութիւն։

«Խրել» «հրել» «ցրծուն» օրինակ են այն բառերու որոց բնականութիւն կը կայանայ ոչ այնքան ձայնին արքան արտասանելու եղանակին մէջ։ Նոյնպէս են մուն և պապանձիլ բառերն. մուջն խօսելու համար համրին շրթնային Մ Ը, Մ Ն, շարժումն կը ներկայացուցնէ, ինչպէս պապանձիլն շփոթեալ և ամօթահար եղողին Պ Ը, Պ Ը ընելով խօսելու շրթնային վիժեալ փորձն կը ցուցնէ։ Պապակիլ բառն ծարաւած և բերանն չորցած մարդուն շրթանց իրարու փակչելուն բնախօսական պատկերն է։ Համ բառն բնախօսական պատկերն է այն գործողութեան որով ճաշակելի բանն լեզուի և շրթանց մէջ կը զննեմք Հ Մ Հ Մ ընելով։ «Համբոյր» և «պագ» և «պաչիկ» բառերն շրթնային արտասանութիւն և շրթնային գործողութիւն միանդամայն սքանչելապէս կը պատկերացուցանեն, կը թուի սակայն թէ «համբոյրն» աւելի փափուկ և անձայն տեսակն է, մինչ «պագ» և «պաչիկ» աւելի ուժգին են։ «Պապաջել» «մնջել» և «սուլել» ձայնի և գործողութեան պատկեր միանդամայն են, իսկ «պղպջակ» և «փրփուր» գործողութեան մանաւանդ։

Մամա կամ մամ, պապա կամ պապ, տատա կամ տատ գրեթէ համազգային բառեր են և յոյժ ըմբռնական։ Մանուկ մարդկութեան բառեր են, և այժմ ալ ամէն մանկան բնական և առաջին բառերն։ Ցուսամք լեզուարանք չպիտի համարին զմեզ չափազանցութեան տանիլ սկզբունքն զոր ցայսմայր բացատրեցինք, եթէ մամա բառին ծննդաբանութիւնն տալ փորձեմք։ Օդն շնչելէ յետոյ մանկան գլխաւոր գործողութիւնն է մօր կաթն ծծել։ Ծծելու գործողութեան մէջ շրթունքն մեծ դեր ունին։ Տղան իւր քաղց բացատրելու համար բընազդմամբ շրթնային սարդ բառ մի արտասանել կ'ըսկսի երբ ոեւ իցէ յօդաւոր բառ արտասանելու վիճակին կը հասնի. այդ բառ «մամա» բառն է, զոր կ'ուղղէ մօրըն, և սակայն ոչ թէ «մայր» ըսել կ'ուզէ այլ «մամա» այսինքն կաթ ուտել, շրթային գործողութիւնն։ Այս կերպիւ է որ, «մամա» բառն «մայր» նշանակութիւն առած է յաչս մօրն։ Իսկ «պապա» յայտնի լծորդն է «մամա»ին, մին և միւսն շրթային դիւրադոյն յօդաւորութիւններ, տղուն համար գրեթէ անտարբեր հոմանիշներ։

(Շարունակելի)

ԱԿՆԱՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՔԱԾՆԵՔ

Էշն ի՞նչ գիտէ թը նուշն ինչ է։

Էշն իշուն քով կապես՝ կամ առուցը կ'առնէ կամ փառուցը։

Նոր հաւերուն ճիւճիւ ճիւճիւ հին հաւերուն քշէ քշէ։

Տատա ու մարտ ուսկի վար՝ դուն ալ անկի վար։

Ո՛վ հարս ելլէ՝ դուն հարսնքոր։

Թըւուր շամպայ գերի ես՝ հացտ կեր ու պուտ մի ննջէ։

Բանի պարնատաս խրատ տալ ելաւ՝ շունն օխտը ճոնճ կելլեց։

Մեծուկնաքը պոշ տեղ չեն թողուցեր։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

13 Մայիս 1891

Իտալիոյ հիւպատոսարանին թարգմանին ի Բերա թրամվայի կառքին մէջ՝ վաշտ կազմելու համար բերուած Բուրդերէն անարգուիլն ատոյգ է՝ հակառակ Վիէննայի «Բոռէսբոնտաս տը լէսդ» լրագրոյ սոյն դէպքն ուանուն խեղաթիւրելով ըրած հերքման, որպիսի ամէն առթիւ պարաք սեպած է ընել ի փոխարէն 60 ոսկւոյ ամսականի զոր կը ստանայ այս երկրի կառավարութենէն։

Բերա Շիշլիի կողմն ձիով շրջելու գացող 3 երիտասարդք և 1 կին Բուրդերէն յարձակում կրած և ձիերէն վար առնուած են՝ խամայելու սպառնալեօք, բայց զինուորականք վրայ հասնելով ազատած են զանոնք։

Աւագ հինգշաբթի երեկոյ Ցոյն մը ուշ ատեն, ժամ գրեթէ 12ին, կալաթայի կամուրջէն իւր կինն թեւն առած կ'անցնի. կամուրջի կիսուն Բուրդ մը կնոջ մերձենալով կը ջանայ առնուլ ամուսնոյն ձեռքէն. այս վերջինն «էյ, պաղսա՛նա, տաղտ՞ա մը զանն էթտին քէնտի նի, պուրասը Իսթամպոլ տըր, աչը՛ն» կ'ըսէ։ Բուրդը կը մերկացնէ խամանն, Ցոյնն ալ իր բէվոլվերը կը հանէ և միայն սպաննելու բացորոշ սպառնալիքը կը համոզէ լօլօն։

Բրդաց վաշտին զինուորական զգեստներ տրուեցան Պայրամին, ինչպէս նաև պատուանշան, ատաիճան, և ասոնք եղան սպայներ, մօտերս կը ղրկուին երթալ նոր գունդեր կազմելու, ի հարկին ոչ թէ երկիրը օտարին դէմ պաշտպանելու, այլ Հայերը սրէ անցունելու՝ եթէ շարժում մ'ընեն։

Զատկի աւագ շաբաթ Պ. Պատրիքոֆ ռուսահայն որ իրր գլուխ մայրաքաղաքիս հայ յեղափոխականաց բանտարկուած էր ընդ հսկողութեամբ ռուսական հիւ-

պատասարանի, աւարտեց վեցամսեայ միջոցն որ դեսպանին կողմէն նշանակուած էր դատելու և վճիռ տալու համար։ Բայց ի նախնական մի քանի պարզ հարցումներէ ոչ մի քննութիւն չուզեցին ընել, զի դոլով օտար հպատակ՝ անշուշտ շատ բաներ աներկիւղ մատնանիշ պիտի ընէր և հրապարակեր, ինչ որ Թրքաց գործին բնաւ չէր դար։ Դատավարութիւնն շաբաթէ շաբաթ ձգձգեցին մինչեւ որ պայմանաժամն լրացաւ, յայնժամ Բ. Թարգմանն Մաքսիմոֆ գնաց առաւ զՊատրիքոֆ իր կառքին մէջ և ծխելով ու ծիծաղելով մեկնեցան։ Պատրիքոֆ Ռուսիա գնաց։

Այլ քանի որ պետն Թոյլ տուին առանց վճռոյ, նոքա 10 ընկերներն ընդէ՞ր կը դատեն բանտին մէջ. ասոր կ'ըսեն Թրքական արդարութիւն. կրցածը կը ճմլէ, չկրցածին առջեւ կը նուաստանայ։

Գաւառներէն եկող համբորդներէն (զի այլ եւս ոչ ոք կը համարձակի նամակով գրել) կ'իմանանք թէ ի գաւառս ալ տեղ տեղ մաս մը բանտարկեալներ արձակած են տարեգլխին. այլ երբ պաշտօնապէս ուղուած ուղերձներն կը ղրկուին այդ տեղերէն, արձակուածներն նորէն ի բանտ կը դրուին։ Աշրգեան Սրբազան կառավարութեան համար ցարդ ամէն սարկութիւն ըրաւ, 9—10 ամիս լրտես, մատնիչ վարդապաներու երես տուաւ, Զատկին, այն աւագ և քրիստոնէից համար ամենասրբազան խորհրդոյ մէջ իսկ չվախցաւ Աստուծմէ մաղթել, աղօթել «Սուլթանի» Օսմանի, մահմետականութեան համար... ո՞րպիսի հայհոյութիւն... աղօթել որ զօրանան և ջնջեն զքրիստոնեայս և զքրիստոնէութիւն, ի՞նչպէս Հոգին Սուրբ իսկ և իսկ տաճարին մէջ չչանթահարեց այդ բերանն...։

Այժմ Աշրգեանի ջանքն է ու պիտի լինի էջմիածին բազմել իբր կաթողիկոս. արդէն զայս քանիցս կանխաւ ըսած է. «ես չեմ հրաժարիր այս խայտառակութեամբք, այլ միայն երբ կաթողիկոս ընտրուիմ։»

Զանձնուէրն Տ. Վաղինակ, Խրիմեանի աչքի լոյսն, առ ի հաճոյս Թուրք կառավարութեան և յանիրաւի 3 ամսէ ի վեր յիմարանոցը փակել տուած է, ուր կը հեծէ և կը պառապի։

Կերեւի թէ կաթողիկոսական վերջի ընտրութեան դաւեր պիտի կրկնուին, քանի որ Պատրիարք և վարչութիւն որոշած կ'երեւին այս անգամ ալ խղդել դաւառաց ձայնն՝ իրենց խաղը ազատօրէն խաղալու համար։ Մեք այլ ուր որ կրնանք ձայն կուտանք որ այս անգամ չխաբուին նոցա սնոտի խոստմանց։

Հնչակեան և Փորթուքալեան խմբեր փափաքելի է որ իրենց գործել տուած յիմարութեանց արդիւնքէն խրատուին։ Ընդհանրապէս Հնչակեանց մէջ կային անչահախնդիրներ, քիչ կամ շատ անձնուէրներ (պարզլուխք կանխաւ փախան արդէն) բայց դոքա փոխանակ լռիկ և լուրջ և պարկեշտ անձանց միջոցաւ երկրին ներսերը գործելու, կրթելու զանգուածն ժողովրդեան և պատրաստելու պատեհ առթին համար. ելան յանկարծ, առանց փորձելու, 2-3 մէհֆիտներով խեղճ աղքատ ազգա և խպառ ողորմելի պատանիներու անձեր վարձել քաղաքական ծանր ոճիրներ գործել տալու և գըռդռել մայրաքաղաքին մէջ 50-60 երիտասարդներ որ ելնեն ղինուք (օդը պարպելով) ցոյց ընեն կայսրութեան մը դէմ... ո՞րպիսի անհեթեթ դաղափար։ 1-2 խեղճ փորձերէ ետք, բոլորն դիրար մատնեցին, կրցողը փախաւ, ամէն ինչ երեւան ելաւ և վերջացաւ։ Բայց բան մը միշտ կը մնայ, ճնշել, միջամտել ամէն բանի և ամէն ճամբորդի ետեւէ լրտեսել անխտիր, ամէն տեղ բանտել ո և է անձ որոյ մատին շնչին կասկած լինի։

Դալով Փորթուգալեանի տեղւոյս գործակալաց, սա քա թէեւ թշնամի Հնչակեանց, այլ առիթ դտան վատաբար խաբելով զդայման տէր անձերն՝ շատ մը դումարներ շորթել իրենց դրպանին համար, ազդատիրութեան դիմակին տակ։ Իսկ Փորթուգալեան ի՞նչ ըրաւ, միայն յորդորել ի յեղափոխութիւն խեղճ, տգէտ և անտեր ժողովուրդն, և այդ դադռութեանց արդիւնքն եղաւ ասա և ի դաւառս՝ տղայական վնասակար ցոյցեր։ Եւ երբ այսօր ինքն ապահովի հարստացած կ'ապրի, ի՞նչ ըրաւ այդքան բանտարկելոց ասա և ի Տաճկաստան. ի՞նչ կ'ընէ այնքան հաղարաւորներու որք առաւել չարաչար կը ճնշուին այդ պատճառաւ, և ի՞նչ կ'ընէ բիւրաւորաց որք յերեսաց այդ տղայական խռովութեանց չարաչար կերպով վնասուեցան նիւթապէս, որն գործէն ղրկուած, որն առեւտուրէն վնասուած են. հապա ու՞ր դնենք այն անդարմանելի վնաս որ այսօր չենք կրնար եթէ ուզենք իսկ ո՛ և է տեղ երթալ բան մը պատրաստելու կամ գործելու համար։

... Ռուսահայք կ'երեւի զդացած են զայս, և այժմ կը դտնուին կարող, լուրջ մարդիկ, որ... բայց շատ խիստ դժուարացաւ այս ամէնն։

Ինչո՞ւ Եւրոպայ այդ գործիչներ չեն միանար և գործեր կանոնաւոր յայտագրով և ազդեցիկ ու փարձառու անձանց խորհուրդներն ի նկատ առնլով. ինչու՞ միայն դրամ կ'առնուն ժողովրդէն (ամէն մէկը ղինքն գովաբանելով և զմիւսն վատահամբաւելով) և բոլոր գաղթականութեանց Հայերէն ընտրեալ վստահելի մարմին մը չեն կազմեր որ խորհի, հսկէ, դանձէ և գործէ...։

... Համբերենք, քանի որ Հայ ենք, և լռենք, բայց մինչեւ ե՞րբ։ Օտարին խաբուինք, տիրող կառավարութենէն, մեր ազդային վարչութենէն խաբուինք, բայց հա՞րկ է արդեօք որ զմեզ փրկելու պաշտօն ստանձնող և ազատ երկրաց մէջ ապրող անձերէ ալ խաբուինք, կամ նոցա ձեռք խաղալիք դառնանք։

Խնդրեմ այս ամենն բառ առ բառ դնէք ձեր թերթին մէջ։ ՀՈՑ

Հակառակ մեր թղթակցին խնդրոյն, հարկ սեպեցինք առաջ անդ իրաց թողուլ տղեր, և մասնաւորապէս կարի խիստ հատուած մի զեղչեցինք վերաբերութեամբ Պատրիարքին։ Խմ.

ՆԱՄԱԿ ՎԻՔՕՐԻՆՈՒԷՆ

Շնորհակալութեամբ կը հրատարակենք հետեւեալ երկու նամակներն որք «Հայք»ի ուղղուած են այնպիսի ազդայնոյ մի կողմանէ որ հայ ժողովրդեան հետ ապրած, Ռուսահայաստանն և Թրքահայաստանը այցելած և Վամպէրիի և այլ նշանաւոր «Վամփիռ»ներու հետ խօսակցած է Հայաստանի արդի վիճակին վերայ։

21 Մայիս 1891 Բօսթանճա

Մեծայարգ

Խմբագիր Տնօրէն «Հայք» պատուական լրագրոյ
Ի Նիւ Եորք Ամերիկա

Տէր,

Հաճեցէք հրատարակել մի քանի տեղեկութիւններ ի մասին «Հայք»ի և Ռումանիոյ Բօսթանճա քաղաքի Հայոց վրայ։

«Հայք»ը սիրելի և համակրելի կը լինի հետ զհետէ, ամենքն ալ կսպասեն անոր գալստեանը, նորա պատկերներն մեր Հայաստանցի եղբարց սրտերն կը յուզեն և արձակել կուտան հառաչներ, այնպէս որ մարդուս աչերն կը լեցուին։ Կատարսան թէ՝ ի՞նչու չեն ուսած կարդալ և գրել և կըսեն ա՛խ, մեր ժամանակ դպրոց չըկար··· կաղերսեն որ մին կարդայ և բացատրէ գըրուածներն։

Ահ, երբ պիտի ընդհանրական կիրակնօրեայ դպրոցի կամ գիշերային ձրի դասախօսութիւնք չտիսահասից· ի՞նչու և աղգասէր երիտասարդք այս մասին չեն խորհիր և շարունակ կը սիրեն միայն խօսիլ···։

Ինչպէս ծանօթ է Ձեզ, տեղս մի ընկերութիւն կայ Հայրենասիրական· այս տարի աւելի եռանդեամբ սկսած է աշխատիլ, բոլոր հայրենանուէր թերթերու բաժանորդագրուած և բացած է իւր դրասենեակն ամէն հայու, մտնել ազատ և կարդալ։

Ընկերութիւնն մտադիր է բանալ մի ընթերցարան, ուր պիտի գտնուին ազգային պատկերներ, լուսանկարներ, Բաֆֆի ազգասիրական վէպերն հրաշունչ գրութիւնք և հայաստանի տեղագրութիւնք, ազատ երգեր ու բանաստեղծութիւնք են։ Արդէն իւր սակաւաթիւ գրոց մէջ կը գտնուի Հայր Ալիշանի Արարատն, պարծանք և վկայարան մեր ազգի նախնի փառաց և ճարտարագործութեանց։

Այս ընկերութեան գլխաւոր գործիչն և Ատենապետն է Տ· Գարրիէլ Գաղանճեան անվհատ աշխատող մի երիտասարդ, իւր ընկերակիցք եւս ոչ նուազ գովելի են, իրենց լռիկ մնջիկ գործունէութեամբ։

Սոքա չեն այնչափ ուսեալ մարդիկ, գտանին ի Բօսթանձա լեզուագէտ, ուսեալ, հարուստ, նշանաւոր ազգայինք բայց այս դասուն մէջ կը պակսի համերաշխութիւն։

Պանդուխտ ազգայնոց թիւն կը հասնի 150 ի, ոոցա մեծ մասն բեռնակրութեամբ և քաղաքն մի ժամ հեռի գիւղէ կառքով ջուր կրելով, գի քաղաքին մէջ ջուր չը կայ բաց ի մի քանի լեղի հորերէ, իսկ քիչեր կղրաղին առուտուրով և ծառայութեամբ։

50 Հայ ընտանիք կան վաղուց եկած, անոնցմէ ոմանք առաջնակարգ դիրք ստացած են և ունին կալուածներ ու հողեր։

Մի դպրոց ունին, դասատուն է Տ· Տաճատ Պէյլէրեան աշխոյժ և լեզուագէտ մի երիտասարդ, բայց դըպրոցի աղայք շատ փոքր են, քիչ մեծերն Ռումանական դպրոցներն կը յաճախեն։

Ունին մի եկեղեցի, բայց ոչ բնիկ քահանայ, մին կերթայ և միւսը կը դայ։

Դպրոցը և եկեղեցին անշարժ եկամուտ չունին, նուէրներով կը հոգացուին։

Վ· ՊԱՀԼԱՒ

ՆԱՄԱԿ ԹՐՈՒՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Նիւ Եորքի ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲՆ հրատարակութեան կուտայ հետեւեալ նամակն որ պատասխան է իւր ծանօթ շրջարերականին։

5 Յունիս 1891 Թրոյ Ն· Ե·

Մեծապատիւ Ատենապետ Հայ Հայրենասիրաց Յանձնախմբին ի Նիւ Եորք

Սիրելի Տիար

«Հայք»ի Պատուարժան Խմբագրին որդեգրած Կեդրոնական Յանձնախմբի ամենակարեւոր խնդրոյն նկատմամբ ձեր ղրկած ծրագիր հանդերձ շրջարերական նամակաւ, գաղթականութեանս կողմանէ եռանդագին ոգեւորութեամբ ընդունելով 23 անդամներէ բաղկացեալ տեղական Յանձնախումբ մի կազմեց և անցեալ կիրակի Մայիս 31 յատուկ նստին ներկայեց յիշեալ ծրագիրը ի քննութիւն։ Ուստի պատիւ ունիմ ձեզ ծանուցանել յանձնախմբին կողմանէ առաջարկեալ հետեւեալ կէտերն։

Ա· Յօդուած երրորդի մէջ յիշեալ քան զամենայն աւելի քուէ շահող առաջին երեքին փոխարէն առաջին հինգն նշանակուին, նկատելով որ գործն բազմահղի է և երեքէ աւելի անձնուէր և փորձառու հայրենասէներու կը կարօտի։

Բ· Յօդուած հինգերորդի մէջ առաջարկեալ 1500 թալեռն 1000 թալեռ նշանակուի ի մտի ունենալով թէ այդ ազգանուէր հայրենասէր Հայեր իրենց վարձատրութիւնն յապագային պիտի ընդունին ու այս եղբայրասիրական սուրբ գործին համար ազգ ու Աստուած միատեղ պիտի պսակեն զիրենք։

Գ· Ընդհանուր ժողովին ուղղակիւ պատուիրակաց ընտրութեան եղանակին մէջ հետեւեալ դժուարութիւնք, այսինքն մի պատուիրակ կարենալ ղրկելու համար յիսուն քուէարկու անդամ գտնել փոքր գաղթականութեանց համար յոյժ դժուար ու բուսական ծախք պատճառելուն, և շատ գաղթականութեանց մէջ գժբաղդաբար աւելի կարող և գործին յարմար անձնաւորութեանց պակսին ի մէջ բերուելով կառնջարկուի թէ, Նիւ Եորքի յանձնախումբն քսան կամ երեսուն փորձառու ու յարմար ազգասիրաց—որ Թուրք Կառավարութենէն ո և է կախում չունենան — անուններն նշանակելով ցրուեն հանուր գաղթականութեանց· և կանոնաւոր տուրք վճարող ամէն մի Հայ իրաւունք ունենայ յիշեալ ցուցակին մէջէն տասն նշանակել իբրեւ անդամ Ընդհանուր ժողովին, և քուէարկութեան մասնակցող ամէն մի Հայ կէս թալեռ (2½ ֆրանք) ալ աւելի տուրք վճարէ պատուիրակաց համրու ծախքին համար, այս կերպ ծախքի մասին իրընայութիւն մի եղած լինելէ զատ, մեծ գաղթականութիւններէն դուրս առանձին ապրող կարող անձ մի իւր յարմար պաշտօնին կրնայ կանչուիլ, և փոքր գաղթականութիւնք ուրիշներն գտնելու ու միանալու ճանապարհէն ազատելով կրնան հանուր հայութեան հետ իրենց համար Ֆրանսահէն, Հնդկաստանէն և մինչեւ անդամ Ճավայէն պատուիրակներ ընտրել։

Ընդհանուր քուէարկութեան համար առաջարկեալ ժամանակն ընդունելի է մեզ, հետեւապէս գաղթականութիւնս պատրաստ պիտի գտնուի ընդհանուր քուէարկութեան մասնակցելու։ Ընդունեցէք գաղթականութեանս երախտագիտութեան խորին յարգանքն Ձեր ազնիւ ջանքերուն համար։

Ի դիմաց տեղական յանձնախմբին ի Թրոյ

Մ· Պ· ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ի ՓՕՐԹԼԷՆՏ-ՄԷՅՆ

Գրեթէ ամիս մը կը բոլորի որ Փորթլէնտ կը ղրաղլիմ, մասնակի տեսութիւններ ունեցայ քաղաքս գտնուող Հայոց հետ, զոր կ'ուզեմ հաղորդել Ձեր ազգօգուտ թերթին։

Ութ ամիս առաջ միայն մէկ Հայ կար ասա բայց այժմ 30ի կը հասնի ըստ յետագայ ցուցակին։

Խարբերդցի	8
Դատէմցի 3 ժամ հեռու քաղքէն	15
Հիւսէնիկցի	3
Կէսարիացի 2 ժամ հեռու քաղքէն	1
Երզնկացի	1
Կիրասունցի	1
Զիւնկուչցի	1
	30

Կը զբաղին հետեւեալ գործերով

Երկաթի գործարան	6
Բրադի գործարան	7
Մէքէնիսթի գործարան	13
Անգործ	4
	30

Ասոնք ամէնը բոլորովին անգէտ Անգլիէրէն լեզուին կը յաճախեն ամէն կիրակի կանոնաւոր կերպիւ Բօնկրեկեյշըն եկեղեցի մը ուր կը սովրին Անգլիէրէն և կրօնական պաշտօն կը կատարեն։ Ցաւ ի սիրտ կ'ըսեմ թէ յայտնի բողոք մի տեսայ ասոնց մէջ, ոևէ Հայ անհատի մը կամ կղերականի մը այցելութենէն զուրկ ըլլալնուն համար, այսպիսի տեղեր անհրաժեշտ է Հայ թերթի մը մուտքը և երբեմնակի այցելութիւնք զի ասոնք և ասոնց նման տեղեր կարելի է կորսնցուցնեն ընտանեկան գութն և բոլորովին հեռուին Ամերիկեան սովորութեանց։ բարուց և վարուց։ Այսչափ միայն տեղեկագրելով կը խոստանամք առաջիկայն գրել հանդիպած քաղաքներուս, ուր որ Հայ անհատ գտնուի։

29 Մայիս 1891 ՊԱՐՈՅՐ

ՆԱՄԱԿ

ՅԱՓՏՆԷ ԵՓՐԱՏԷՍ

Ցարդ չտեսնուած պատուհասք տեղի կունենան ասա հետ զհետէ։ Հրդեհի մէջ մայր մի երեք զաւակօքն հանդերձ ողջակէզ եղաւ։ ձմեռն, ինչպէս գիտէք, ձեան հոսանք մի խեղդամահ ըրաւ երկու մայրեր և երկու զաւակունք իրենց նստած տեղն։

Ներկայէս հինգ օր առաջ ալ սասիկ անցրեւ տեղաց և շատ դոռդռաց։ միանգամ այնպիսի ահագին ճայթուն մի պատահեցաւ որ ամէն մարդ սոսկաց։ Նոյն պահուն երկու քոյրեր, մին 16 տարեկան միւսն 4, որք տանիքն կը գտնուէին, շանթահար մեռան։ Իրենց մօրն, որ դըրան մէջ է եղեր, մէկ ոտքն ու մէկ ձեռքն վնասուած են և դժուարաւ կը քայլափոխէ։

Տիրող ցեղն այս ահաւոր դէպքերն կ'ընծայէ մեր վերի թաղի Հայ երիտասարդութեան անհանդարտութեանց այս վերջին ժամանակներս։

ՕԴԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Օդափոխութեան եղանակն հասած է նիւ Եորքի մեծատանց համար եկը մերձենայ միջնակարգ դասուց համար։ Տեղափոխութեան միջոցներն այնքան զարգացեալ են և այնքան ածանցած զի պարկեշտ քսակի տէր եղող ընտանիք անգամ գիւղացնացութեան կը նուիրեն քանի մ'օր կամ քանի մի շաբաթ։ «Գիւղացնացութիւն» ըսինք, բայց այդ բառ օդափոխութեան հոմանիշ չէ։ «քաղաքացնացութիւն»ալ կրնայ գիւղացի ընտանեաց լաւագոյն օդափոխութիւնն լինիլ։ վասն զի խնդիրն միայն «օդն» փոխելու վերայ չէ, այլ կենաց և աշխատութեան սովորական ընթացքն ընդմիջել պէտք է կարճ ժամանակի մի համար ապրելու այնպիսի կերպ մի ընտրելով որ սովորականին հակառակն լինի։ ուղեղով աշխատող մարդիկ մարմնական աշխատութեան աւելի ժամանակ տալով, մարմնով աշխատողներն հրահանգիչ և զուարճալի ընթերցմամբք մանաւանդ, քաղաքացին իլեառն կամ ի գիւղ երթալով, գիւղացին ալ քաղաքի կեանքն դիտելով և ապրելով։

Օդափոխութիւնն, ըստ այսմ, միայն ակարացելոց կամ ախտաւորաց համար չէ։ առողջ մարդն ալ պէտք ունի օդըն և միջավայրն փոխելու տարին դէթ մէկ անգամ։ Իմաստունն, երբ առողջ է, հոգ կը տանի որ չհիւանդանայ։ Օդափոխութիւն պէտք է ընեմք ոչ թէ հիւանդ լինելով այլ հիւանդ չլինելու համար։

Առողջական տեսակէտով՝ օդափոխութիւնն քաղաքի բնակչաց համար անշուշտ աւելի ստիպողական է, վասն զի քաղաքաց օդն միշտ բաղդատական ապականութեան մէջ է։ գործարանաց հոտն ու ծուխն, ախոռներու ներկայութիւնն, կենդանեաց՝ մարդոց և ճրագներու խիտ բազմութիւնն, կենդանական և բուսական փտութեանց ահագին քանակն ի հարկէ կ'ապականեն անդադար քաղաքներու՝ մանաւանդ մեծամեծաց՝ օդն։ Բարեբաղդաբար առողջարանական ուսմունք կը ռամկացուցուին թերթերու միջոցաւ, և քաղաքապետութիւնք ալ, բժշկաց պաշտօնական աջակցութեամբ, օդին ապականութեան վերադիտչեալ պատճառներուն դէմ շարունակ կը մաքառին։

Օդափոխութիւնն ոչ լոկ մարմնական այլ և իմացական և բարոյական առողջութեան պարտի ծառայել։ Ամերիկացիք, որք ճամբորդութիւն սիրող ժողովուրդ մ'են, օդափոխութեան և աշխարհատեսութեան օգուտներն միանգամայն կը վայելեն երթալով յԵւրոպա և պտտելով այլ և այլ երկիրներ։ Նուազ հարուստ դասերն և անոնք որոց գործ չներէր հեռաւոր երկիրներ այցելել, իրենց երկրին մէջ «Շաթաքուա» կոչուած ամառնային զբօսավայրերն կ'երթան։ Անցեալ ամառ մեք պատեհ ունեցանք այս վայրերէն միոյն մէջ մի քանի օր անցուցնել և ամէն ինչ մօտէն դիտել և վայելել։ Մարմնական եւ մտաւորական զբօսանք քաջ լծակցած են անդ։ խաղալու և թիավարելու, խօսիլ խնդալու և ուտել խմելու, երգելու ճառ լսելու և կարդալու ժամեր կան, և մարդ շաբաթ մի կամ երկու անցուցնելով այնպիսի տեղ մի, մարմնով և մտքով պարարացած կը վերադառնայ ի գործ, բոլոր տարւոյն համար առողջութեան և զուարթութեան առատ պաշարով։

Սանասարեան վարժարանի սանունք Կարնոյ մօտ լեռնային վայր մի կ'երթան և իրենց ուսուցչաց հսկողու-

թեան ներքեւ վերոյիշեալին շատ նման կերպիւ կը վայելեն ամառուան պարապուրդն։ Օրհնեալ լինի յիշատակը Բարերար ՍԱՆԱՍԱՐԵԱՆԻ, որոյ պանծալի հաստատութեան մէջ սանուելքն կ'ուսանին ոչ միայն գիտութիւն և ձեռարուեստ, այլ և երգել և նուագել, ցատքել, սահիլ, խաղալ և զբօսնուլ։

ԱՑԼ ԵՒ ԱՑԼԻՒ

— Հրէայք, օտար աշխարհներէ իրենց հայրենի երկիրն վերադարձած՝ սկսած են Գալիլիոյ մէջ բարգաւաճիլ հողագործութեամբ. ճամբաներ չինած են, այգի տնկած են, և զանազան պտուղներ կը հասցուցնեն, ինչպէս թուզ, լիմոն խնձոր և նուռ։ Շնորհքով տնակներ չինած են և գայնս գեղեցիկ պարէզներով շրջապատած։ Հալածեալ և աստանդական Հրէայք 100,000 ներով պիտի երթային ի Պաղեստին և հաստատուէին իրենց նախնեաց հողին վերայ եթէ չկասկածէին թէ հիւսիսային զօրութիւնն ժամանակ յետոյ կրնայ գալ զիրենք անկէ հալածել։

Արդեօք ե՞րբ պիտի գայ, ընթերցողք, այն քաղցր օրըն երբ պանդուխտ Հայեր բազմութեամբ կարենան վերադառնալ ի Հայաստան, ի միասին տանելով օտար երկրաց ճարտարութիւններն և վախ չունենալով բռնութենէ հզօրաց կամ յաւազակութենէ բարբարոսաց։

— Թիֆլիսի լրագիրներէն կը տեղեկանամք թէ նոյն քաղքէն 10 կամ 12 ունեւոր ազգայինք մտադիր են ամսական հինգական ռուպլի տալ և այդ գումարով մի քանի տարի շարունակ պահել Իտալիաւմ երիտասարդ երդիչ Պ. Ամիրջանեանցն, որպէս զի նա կարողանայ դասեր առնուլ և կատարելագործել իւր ձայն։

— Շամախու Թեմի Գանձակ գիւղին մէջ վերջերս վախճաներ է Հայ կին մի ի հասակի 130 ամաց, իւր թոռան թոռն տեսնելէ յետոյ։

— «Լ'Ամէնի»ի ուղղեալ Պոլսական թղթակցութիւն հետեւեալ լուրերն կուտան։ Ոստիկանութիւնն հայ պանդոկի մի մէջ ի Կալաթա՝ գտած է բազմհարուածեան հրացանաց երկու սնտուկ։ Եօթն Հայ դատապարտեալք ի Ֆէղղան աքսորեալ են։ Սուլթանն ուղած է որ Զարն և Շահն աչակցին իրեն ընդդէմ Հայոց, և Օսմանեան դեսպանն ի Թեհրան խնդրած է Շահէն Սալմասթի Հայոց դէմ խիստ միջոցներ ձեռք առնուլ։ Երիտասարդ վարդան Գալուստեան, բանտի մէջ հիւանդութենէ տառապեալ, մեռած է, մեծ բազմութիւն ներկայ գտնուած է յուղարկաւորութեան հանդէսին, ուր Սրուանձտեանց Եպիսկոպոսն դամբանական խօսած է։

— Յունիս 3 ին Կ. Պոլսէն «Թան»ի ուղղեալ հեռագիր մի կ'ըսէ, հանապարհորդներու սովորական կառախում բըն երէկ ժամ 8 ին մեկնելով ասկէ, յարձակում կրած է ի Զէրքէզքէօյ, մերձ ի Զօրլու, Կ. Պոլսէն 116 հազարամէթր հեռուն, իրր 30 աւազակներէ բաղկացեալ խմբի մի կողմանէ, որոց գլուխն է Յոյն Անաստաս ոմն։

Աւազակք նախապէս երկաթուղին խանգարած էին մի քանի մեթր տեղ, որով կառախումբն գծէն դուրս ելաւ և քանի մի չոգեկառք կործեցան։ Ուղեւորներէն ոմանք վիրաւորուած են։ Իսրայէլ անուն Պէրլինցի սեղանաւորն և իւր ընկերք առեւանգուած են աւազակներէն, որք 10,000 լիրա փրկանք կը պնդանջեն։ Գերմանական դեսպանն Պերլինէն հրաման ընդունած է 10,000 ոսկին վճարելու, յետոյ Թուրք կառավարութենէն զայն պահանջելու իրաւունքն վերապահելով սակայն։

Բէօսթէնճէէն «Հայք»ի ուղղեալ Բ. Նամակն ստիպուած եմք յառաջիկայ Թուոյ Թողուլ։

ՏՈՔՔՈՐ Ա. ԱՅՎԱԶԵԱՆ

Փոխադրած է իւր բնակարան ի Թիւ 164, Արեւելք 80 րդ փողոց, ուր հիւանդ կ'ընդունի առաւօտեան ժամ 8 էն 9 և երեկոյեան ժամ 6 էն 8։

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ
ԵՒ
ՆԱԻԻ ՏՈՄՍԱԿ

Ութ տարուան փորձառութիւնն կ'ապահովէ հասարակութիւնն թէ մեր փոխանակագրեր են ամենաժանեւ ապահով Թուրքիոյ ամեն քաղաքաց համար, կեդրոնատեղիք ըլլալով Խարբերդ և Կ. Պոլիս։ Նոյնպէս կրնամք դրամ ղրկել Եւրոպա ուր որ ուզուի պանդայի միջոցով։ Նաև գոհացուցիչ դներով տոմսակ կը վաճառեմք Ամերիկայէն Եւրոպա, Եւրոպայէն Ամերիկա ճամբորդելու համար, նոյնպէս Թուքիոյ ամէն նաւահանգիստներէն դալու և երթալու համար Թրիէսթի ճամբով։ Նամակներու անմիջապէս կը պատասխանուի։ Պէտք է դիտել կամ գրել ինձ այսպէս M. S. T. Nahigian, Worcester Mass.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ՈՒՂՂԱՓԱՌ Ս. ԵԿԵՂԵՑԻ

Ամէն Կիւրակէ ժամ 1. 30 ին յետ միջաւուր՝ առաւօտեան ժամերգութիւն կը լինի։ Նաև ամէն հինգշաբթի երեկոյ, ժամ 7. 30 ին Եկեղեցական երաժշտութեան վարժութիւնք կը լինին։

ՍԲ. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ
Ի ՆԻՒԵՕՐՔ
ԸՆԹԵՐՑՈՂ
ՀՐԱՆՏ ՄԵՍՐՈՊ ԲԻՐԼԷՃԵԱՆ

Ամէն Կիրակի յետ կէս աւուր ժամ 2. 30 ին ի Կրէյս Մատրան, Պրոսուէյ և Տասներորդ Փողոց, կրօնական պաշտամունք կը կատարուին հայերէն լեզուաւ և Եպիսկոպոսական դրութեամբ։

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE, NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 րդ փողոցներու միջև արևելեան կողմն։
—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—
Նախաճաշ 40 և ճաշ 75 սենթ

ED. LEGOLL, PHARMACIST,

Successor to W. CASWELL,

Pharmacie Francaise,

286 SEVENTH AVE., BET 26 TH & 27 TH STS., N. Y.

ESTABLISHED 1846.

Դեղագրեր կը պատրաստուին խնամով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ